ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-6-5-Ա

ք. Երևան 08.07.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի հուլիսի 8-ի նիստում քննարկեց 2019 թվականի հունիսի 10-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ adp Gauselmann GmbH (Merkur-Allee 1-15 32339 Espelkamp, DE) ընկերության բողոքը (IR1343871) «Magic Monk Rasputin» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հիմք ընդունելով Ապրանքային նշանների մասին ՀՀ Օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասը, Գործակալությունը որոշում է՝ ուժի մեջ թողնել մերժման մասին որոշումը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը բացառապես բաղկացած է «Magic Monk Ռասպուտին» գրառումից, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «կախարդական վանական Ռասպուտին» չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան միջազգային ծանուցման մեջ նշված ապրանքների համար գերմանական ընկերության անունով, քանի որ խոսքը վերաբերում է ռուսական քաղաքական գործիչ Գրիգորի Ռասպուտին և սպառողին կարող է մոլորության մեջ գցել արտադրողի վերաբերյալ հարցերում: Անդրադառնալով կրկնական փորձաքնություն խնդրարկելու մասին դիմումում նշված հայտատուի նախաձեռնությամբ խնդրարակված ապրանքների սահմանափակման առաջարկին, տեղեկացնում ենք, որ վերոհիշյալ գործողությունը իրականացնում է ՄՍՀԿ Միջազգային բյուրոն՝ ներկայացված MM6 ձևաթղթի հիման վրա:

Կոլեգիայի նախագահը նշեց, որ կոլեգիան հաշվի առնելով այն փաստը, որ հայտատուն կրճատել է խնդրարկվող 9-րդ դասի ապրանքների ցանկը կարծում է որ այդ ապրանքների համար ապրանքային նշանի գրանցումը սպառողին մոլորության մեջ չի գցի արտադրողի վերաբերյալ հարցում, հետևաբար բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «Magic Monk Rasputin» (IR1343871) ապրանքային նշանը գրանցել բողոքում նշված ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ